

32-K
CA 214

Հ Ս Խ Հ Կ Ա Ր Մ Ի Ր Խ Ա Չ



ВРЕЖОУЕНА
ИНСТИТУТ
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

Մ. ԲՍՐԱՆՈՎ,

ՀԵՄԿ (Բ) Կ XVI ՀԵՄԱԳՈՒՄԱՐԸ
Յ Ե Վ,
ԿԵՐՄԻՐ ԽԱԶԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

341.3

Բ-34

Հ Ր Յ Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Հ Կ Ա Ր Մ Ի Ր Խ Ա Չ Ի

Յ Ե Ր Ե Վ Ա Ն — 1931

01 MAR 2010

05 FEB 2007

ՀՍԽՀ ԿՍՐՄԻՐ ԽՕ.Զ

34
3

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ
ԳՐԱԳՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳՐԱԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ
1992

Մ. ԲԱՐՍԵՆՈՎ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՀԱՄԿ(Բ) Կ XVI ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ
ՅԵՎ
ԿԱՐՄԻՐ ԽԱԶԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հրատարակարյան Հ. Կարմիր Խաչի № 8
Յ Ե Բ Ը Դ Ե Զ 1931

Հ. ԵՎԻԹ

01 MAR 2013

34493



Պետերատի տպարան
Գլավիին 6752 (բ)
Պատվեր 4034
Ցիքած 10.000



61949-67

ՀԱՍ ԿԿ (բ) XVI ՀԱՍԱԳՈՒՍԱԲԸ ՅԵՎ ԿԱՐՆԻՐ ԽԱՁԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

XVI կուսակցական Համագումարը իրօք պատմական համագումար է հանդիսանում, վերստին նրա վորոշումները բացում են նոր փայլուն եղ ՍՍՀՄ սոցիալիստական շինարարության գործում: Յեթե XIV համագումարը կարելի չէր անվանել ինդուստրացման համագումար, իսկ XV-ը — գյուղատնտեսության կուլեկտիվացման — ապա XVI համագումարը բնորոշվում է լայնածավալ վճռական հարձակմամբ ամբողջ Ֆրոնտով այն ամենի դեմ, ինչ վոր հանդիսանում է տապալված հին հասարակարգի մնացորդ: Վճռական սոցիալիստական հարձակումը կատարվում է այնպիսի պայմաններում, յերբ «մեզ մոտ ՍՍՀՄ մեջ գոյություն ունի սոցիալիստական շինարարության աճող վերելքը և արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ, — նրանց մոտ, կապիտալիստների մոտ՝ աճող տնտեսական կրիզիս և արդյունաբերության մեջ և գյուղատնտեսության մեջ» (Ստալին, Կենտկոմի քաղաք. հաշվետվությունը XVI Համագումարում):

XVI Համագումարին կուսակցությունը յեկա՛վ սոց. շինարարության ամենահա-

բաւա գործնական փորձով, ավելի ամուր կերպով սեղմած իր շարքերը աջ ոպորտունիստական թեքումների և ձախ խոտորումների դեմ մղած պայքարում: Այդ համադրումարում կատարվեց հանրադումար մեծ աշխատանքների պլանի իրականացման մեջ ունեցած նվաճումների, վերլուծում արվեց ճանապարհի վրա դառնված դժվարություններին և թերություններին, նշվեցին նաև դրանց դեմ պայքարելու միջոցներ: Լենինիզմով և մարքսիզմով բեղմնավորված գործնական փորձի վրա հիմնված կուսակցությունը ապացուցեց վոչ առաջին անգամ, բայց անկասկած վերջին անգամ բոլոր թերահավատներին և տատանվողներին աջ և ձախ թեքումների ամբողջ անդորությունը, նրանց կատարյալ փնասակարությունը սոցիալիստական շինարարության գործի համար և հաստատեց, վոր միակ ուղիղ ճանապարհը հանդիսանում է կուսակցության լենինյան գլխավոր գիծը: «Մեր համագումարում, XVI համագումարում, վոչ միայն յերեվան չեկավ ձեվակերպված ոպպոզիցիա այլ և չդառնվեց անգամ փոքրիկ խմբակ կամ նույն իսկ առանձին անհատներ, վորոնք նպատակահարմար համարելին այստեղ ամբիոն դուրս գալ և հայտարարել կուսակցության գծի անճշտության մասին: Պարզ է, վոր մեր կուսակցության գիծը միակ ճիշտ գիծն է, ընդ վորում նրա ճիշտ լինելը, ինչպես յերևում է, այնքան պարզ է և անփիճեյի, վոր նույնիսկ աջ թեք-

ման նախկին ղեկավարները հարկավոր համարեցին սուանց տատանվելու իրենց յեղություններին մեջ ընդգծել կուսակցության ամբողջ քաղաքականության ճշտությունը»: (Ստալին—յեզրականացման խոսքը քաղաքական հաշվետվության առթիվ):

Յեւ ուրիշ գրություն չեր ել կարող լինել: Յերբ յերկիւրը ինդուստրացվում է, յերբ մեկը մյուսի յետևից առաջ են դալիս արդյունարեության նոր գիգանտներ, —միայն անհուսալի մարդիկ կարող են չտեսնել նվաճումներ սոցիալիստական շինարարության մեջ և կասկածել ընդունված գծի ճշտության մասին: Թեքումների կողմնակիցների բոլոր կասկածները գյուղատնտեսության կոլեկտիվացման խնդրի շուրջը վերջնականապես ջախջախվում են, յերբ կոլեկտիվացումը վաղուց արդեն ծրագրների և քննադատությունների շրջանից անցել է փաստացի իրականացման փուլի մեջ: Հնգամյակի համարձակ պլանը, վոր առաջ բերեց այնքան վիճարանություններ և հարձակումներ թեքումների կողմնակիցների շարքերից, այսոր փաստորեն դարձել է քառամյակ, իսկ շինարարության շատ բնագավառներում յեռամյակ ու յերկամյակ:

Իսկական լենինյան գծի ճշտությունը, աշխատավոր լայն մասսաների վոգեվորության հակայական վերելքը լենինյան կուսակցության ղեկավարությամբ ապահովեցին սոցիալիզմի կառուցման շլսված տեմպեր ԽՍՀՄ մեջ: «Մենք մտել ենք սոցիալիզմի շրջանը—

ասում ե Ստալինը—վորովհետև սոցիալիստա-
կան սեկտորը այժմ պահում ե իր ձեռքերում
ամբողջ ժողովրդական տնտեսութեան բոլոր
տնտեսական լծակները, թեև մինչև սոցիալիս-
տական հասարակարգի կառուցումը և դաս-
կարգային խորութեան շրջանների վերացումը հե-
ռու յե»:

Մենք մտել ենք սոցիալիզմի շրջանը—սո-
ցիալիստական շինարարութեանը մեզ մոտ
բուն կերպով ծավալվում ե: Իսկ միևնույն
ժամանակ կապիտալիստական աշխարհը դա-
լարվում ե ամենադաժան տնտեսական կրիզիսի
ցնցումներում, վորը հաջորդեց կապիտալիզմի
այսպես կոչված «ստաբիլիզացիային»:

Այդ կրիզիսի հետեվանքով սաստիկ սըր-
վել ե մրցումը իմպերիալիստական յերկրների
մեջ նոր շուկաների համար մղվող նրանց պայ-
քարում. խորացել ե հակամարտութեանը հաղ-
թող և պարտված յերկրների (Գերմանիա) մի-
ջեվ, աճում ե հակասութեանը աշխատանքի
և կապիտալի միջեվ—կապիտալիստների մի
կողմից, և պրոլետարիատի ու զաղութային
ազգերի մյուս կողմից:

ԽՍՀՄ տեսակարար կշռի աճումը թե տըն-
տեսական և թե քաղաքական տեսակետից ա-
ռաջ ե բերում ելի մի հակամարտութեան—այն
ե հակամարտութեան ԽՍՀՄ և ամբողջ կապի-
տալիստական աշխարհի միջեվ, յերկու հակա-
ռակ սկզբունքների միջև, սոցիալիստական և
կապիտալիստական: Այդ հակամարտութեան

նը «մերկացում ե մինչ արժատները կապի-
տալիզմի բոլոր հակասութեանները և հալա-
քում ե նրանց մի հանգույցի մեջ, դարձնելով
նրանց նույն կապիտալիստական կարգերի
կյանքի և մահվան խնդիր»:

Ահա թե ինչու ղինվորական ընդհարում-
ների և հարձակումների սպառնալիքները վոչ
միայն չեն պակասում, այլ ավելի և ավելի
բազմանում են, և նրանց աճումը տեղի յե ու-
նենում զուգնթացաբար նրա հետ, թե ինչպես
են աճում հակասութեանները իրեն կապիտա-
լիզմի մեջ և կապիտալիզմին ու ԽՍՀՄ Միու-
թեան մեջ:

Այդ պատճառով ամեն անգամ, յերբ կա-
պիտալիստական հակասութեանները սկսում
են օրվել, բուրժուազիան իր հայացքները ուղ-
ղում ե ԽՍՀՄ կողմը. չի՞ կարելի արդյոք լու-
ծել կապիտալիզմի այս կամ այն հակասու-
թեանը կամ բոլոր հակասութեանները միասին
վերցրած ի հաշիվ ԽՍՀՄ, Սոբհուրդների այդ
յերկրի, հեղափոխութեան միջնաբերդի, վորը
հենց միայն իր գոյութեամբ հեղափոխակա-
նացնում ե բանվոր դասակարգը և զաղութե-
րը, վորը խանգարում ե նոր պատերազմ պատ-
քատելուն, վորը խանգարում ե աշխարհը
նոր ձեվով բաժանելուն, վորը խանգարում ե
տնորինելու. իր ընդարձակ ներքին շուկան, վո-
քը այնքան անհրաժեշտ ե կապիտալիստներին
մտնավանդ այժմ տնտեսական կրիզիսի պատ-
ճառով: Այստեղից ե ծագում ձգտում դեպի

ալմանտյուրխատական հարձակումներ ԽՍՀՄ գեմ և դեպի ինտերվենցիա, մի ձգտում, վորը պետք է ել ավելի ուժեղանա ծավալվող տնտեսական կրիզիսի հետեվանքով»: (Մտալիճ, Քաղաքական հաշվետվություն Կենտր. Կոմիտեյի):

XVI Համագումարը տվեց միանգամայն պարզ վերլուծում միջադ. դրության, նվաճումների, գեմիտրությունների և Խորհրդային Միության սոցիալիստական շինարարության պլանակտիկայում յեղած բացասական մոմենտների, ինչպես և գծեց բոլորովին պարզ ուղիներ, վորոնցով կծավալվի հետագա շինարարությունը:

XVI Համագումարի վորոշակի դրվածքները այնքան լայնածավալ են, վոր ամեն մի կազմակերպություն կարող է նրա վորշումներից անսպառ նյութ վերցնել:

Միջադգային փոխհարաբերությունների բնագավառում համագումարը այսպես է ձևակերպում մեր առաջ կանգնած խնդիրները:

«Համագումարը հանձնարարում է Կենտր. կոմիտեին առաջիկայում ել տանել հաստատ ու վճռական քաղաքականություն, վորի նպատակն է խաղաղություն և ԽՍՀՄ բավորների ու աշխատավոր մասսաների յեղբայրական կուպի և համերաշխության ամրացում կապիտալիստական յերկրների և գաղութների բանվորների և աշխատավորների հետ: Անհրաժեշտ համարելով ել ավելի զարգացնել ԽՍՀՄ տնտեսա-

կան հարաբերությունները կապիտալիստական աշխարհի հետ արսաքին առևտրի մենաշնորհի անխախտ պահպանման հիման վրա և ամենալայն կերպով ոգտագործելով առաջավոր կապիտալիստական յերկրների տեխնիկան ԽՍՀՄ ինդուստրացումը արագացնելու համար, համագումարը ընդգծում է յերկրի սոցիալիստական ինդուստրացման բայլչեվիկյան տեմպերի ամբողջ կարեվորությունը ԽՍՀՄ տնտեսական ինքնուրույնությունը ապահովելու, պրոլետարական պետության պաշտպանունակությունը ամրացնելու և միջադգային իմպերիալիզմի կողմից հնարավոր ինտերվենցիայի բոլոր փորձերին հակահարված տալու համար: Գոհունակությամբ նշելով, վոր մեր Կարմիր Բանակը նորից ցույց տվեց յուր գորությունը և մարտունակությունը, համագումարը ամբողջ վճռականությամբ շատում է, վոր անհրաժեշտ է կենտրոնացնել կուսակցության ուշադրությունը և ավելի լայն չափով մոբիլիզացիայի յենթարկել բանվորական դասակարգի և գյուղացիության չքավոր-միջակային մասսաների բոլոր ուժերը ամրացնելու համար ԽՍՀՄ պաշտպանունակությունը, Կարմիր Բանակի, ծովային և ոդային նավատորմի գորությունը և մարտունակությունը»: (XVI Համագումարի Կենտրոնական Կոմիտեյի հաշվետվության առթիվ ընդունված բանաձևից):

Յուրաքանչյուր կազմակերպություն, վորը այս կամ այն չափով մասնակցում է ԽՍՀՄ

պաշտպանութեան ամբողջական գործում, պարտավոր ե՛լ ընդունելով այժմ վորոշումները իբրեւ չհամար իր գործունեութեան համար, մաքուր սրտով աստիճանով բազմացնել իր յեռանդը և հենտրոնացնել լայն խորհրդային հասարակայնութեան ուշադրութեանը պաշտպանութեան խնդիրների շուրջը: Յուրաքանչյուր կազմակերպութեանից պահանջվում է ամբողջապես կատարել այն բոլոր առաջադրանքները, վորոշնք կանգնած են նրա առաջ պաշտպանութեան բնագավառում:

Ի՞նչ յեզրակացութեան արելի յե անել համապատասխան վորոշումներից ներքին շինարարութեան բնագավառում: Յերկու խոսքով այժմ յեզրակացութեանները կարելի յե ձեւակերպել այսպէս.

1) մաքսիմալ չափով ծավալել ինդուստրացումը և գյուղատնտեսութեան կուլեկտիվացումը, այդ հիման վրա լիկվիդացիայի յենթարկելով կուլակութեանը իբրև դասակարգ:

2) Լայն չափերով ծավալել կուլտուրական հեղափոխութեան ձեւատը:

3) Արմատախիլ անել մեր կազմակերպութեաններից և հիմնարկներից բյուրոկրատիզմի, անպատասխանատվութեան և չինովնիկական անտարբերութեան տարրերը:

4) Մտցնել բոլոր կազմակերպութեաններին աշխատանքների մեջ պարզութեան և պլանայնութեան:

5) Վճռական կերպով առաջ քաշել դեկա-

վարող պաշտանների՝ բանվորների նոր կարերը:

6) Ել ավելի մեծ չափով զարգացնել քրննադատութեանը և ինքնաքննադատութեանը, նպատակ դնելով ապարատների աշխատանքի բարելավումը սոցիալիստական մրցման միջոցով:

7) Չտել մեր բոլոր մարմինները և կազմակերպութեանները սոցիալիստական շինարարութեան համար ոտար բոլոր տարրերից:

Վճռական նշանակութեան ունեն սոցիալիստական կայունութեանը և հետևողականութեանը բոլոր ձեռնարկումների մեջ: Իժվար թե վորևէ մեկը անգամ սկսի վիճել այն անհերքելիորեն աղացուցված փաստի դեմ, վոր աջ և ձախ թեքումները յերկուսն ել—կատարելապես հակառակ միակ ճիշտ լենինյան դրժին, քիչ չէլին խանգարում, իսկ յերբեմն ուղղակի կաւեցնում էլին սոցիալիստ. շինարարութեան մեր տեմպերը: Մեր շարքերում չպետք է տեղ լինի դրանցից վոչ մեկին և վոչ մյուսին. նրանց դեմ պետք է մղվի վճռական պայքար: Վոչ միայն թեորիայում, իդեոլոգիայես, այլ և գործնական քայլերում մենք պետք է դեկավարվենք միակ գծով—սոցիալիստական շինարարութեան դեկավարող դժով:

XVI համագումարի վորոշումները հանդիսանում են մեր աշխատանքների ծրագիր մոտակա ժամանակաշրջանների համար, նրանք պիտի ընդունվեն իբրև հիմք յուրաքանչյուր

կազմակերպութեան գործունէութեան համար,
լինի դա կուսակցական, պետական թե հասարակական:

ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Այս յեզրակացութիւնը լիակատար չափով վերաբերում է և Կարմիր Սաչին, և Կարմիր Սաչի խնդիրները ներկա մոմէնտում բավականաչափ պարզ ձեւակերպվել են: Մեր ընկերութիւնը, նախ և առաջ, իր գործնական աշխատանքներում վաղուց արդեն կանգնել է նոր կյանք կառուցողների շարքերում: Այս րոպէյին XVI համագումարի վորտչումների հիման վրայ յուրաքանչյուր բլիշ, ընկերութեան յուրաքանչյուր անդամ և յուրաքանչյուր շրջանային կազմակերպութիւն մինչև Կարմիր Սաչի Կենտրոնական Կոմիտեն ներառյալ պարտավոր են դարձյալ և դարձյալ խնամքով վերանայել իրենց աշխատանքների բոլոր տեսակները, ձեւերը, և մեթոդները ել ավելի մեծ չափով մոտեցնել նրանց՝ հիմնական նպատակի կատարմանը—այն է սոցիալիզմի կառուցմանը: Լայն ծավալելով հասարակական ինքնաքննադատութիւնը գոյութիւն ունեցող բայերի դեմ պայքարելու խնդրում, գործ դնելով սոցմբցման մեթոդը, մեր կազմակերպութիւնները պետք է վերակառուց. տեմպերով ավելի և ավելի բարձրանան սոցիալիստական շինարարութեան սատիճաններով: Հանրային նախաձեռնութիւնը, սմբոզլ յեռանդը, ուժերը

և միջոցները պետք է ուղղել այնպէս, վոր ներսնք տան մաքսիմալ արդյունքը հիմնական խնդիրների իրականացման գործում:

Դրա հետ միաժամանակ մենք պարտավոր ենք շատ ավելի մեծ չափով ուշադրութիւն նվիրել մեր յերկրի պաշտպանութեանը:

Կարմիր Սաչի Կենտրոնական Կոմիտեյի վերջին պլենումը նշեց մի շարք նվաճումներ—մեր ընկերութեան աշխատանքների մեջ: Նշվեցին նաև բավականաչափ բացասական կողմեր, վորոնք նկատվում են մեր մի քանի կազմակերպութիւններում: Ամբողջ խորհրդային հասարակայնութեան հետ միասին անհրաժեշտ է մաքսիմալ չափով զարգացնել դրական մոմէնտները մեր աշխատանքների մեջ և անխնայ կերպով խփել նրանց բացասական կողմերին: Միայն այդ յեղանակով տանելով այսուհետև մեր աշխատանքները մենք կարող կլինենք արդարացնել այն վստահութիւնը, վորը դեպի մեզ տածում են կուսակցութիւնը և խորհրդային իշխանութիւնը հատկացնելով վորոշ բնադավաններ թե կուլտուրական հեղափոխութեան ճակատում, և թե յերկրի սանիտարական պաշտպանունակութեան ամբացման գործում:

Շարժենք մասսաներին դեպի կուլտուրական հեղափոխութեան ճակատը: Միանգամայն անվիճելի յե այն տեսակեաը, թե տնտեսական խնդիրները և կուլտուրական շինարարութեան հարցերը կազմում են յերկու կողմերը մի ամ-

բողոքութիւն, վորի անունն է—սոցիալիզմ։
Տնտեսական խնդիրների լուծումը սերտորեն
կապված է ազգաբնակչության կուլտուրական
մակերդեւկի բարձրացման հետ։ Դեռ 1922 թ.
լենինը ասում էր. «Գլխավորը, վորը մեզ պո-
կասում է—կուլտուրականութունն է, կաւա-
վարելու կարողութունը»։ Տնտեսապես և քա-
ղաքականապես ՆԵՊ-ը լիովին ապահովում է
մեզ սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կա-
ռուցման հնարավորութունը։ Խնդիրը «մի-
այն» սրբուխարիատի և նրա ավանդարդի
կուլտուրականութների մեջ է։ Անցած շրջանում
մենք անկասկած սոցիալիզմի ամուր հիմք ենք
գրել։ Իսկ կուլտուրական սեկտորում կա հե-
տամնացութուն, վորը մանավանդ սուր կեր-
պով արտահայտվում է հենց այժմ, յերբ կազ-
բերի պահանջը շատ ավելի գերազանցում է նը-
բանց առկայութունը։ Մեզ պակասում է արն-
տեսական տաղադրանքների կատարման հա-
մար տեխնիկների, ճարտարապետների, տնտե-
սագետների ասպին քանակութուն։ Կուլտու-
րական մեր խնդիրների կատարման համար
մենք չենք արամադրում անհրաժեշտ քանակու-
թյամբ կուլտուրական ուժեր-բժիշկներ, ման-
կավարժներ և այլն։

Մեր ընկերութունը այդ խնդրում իր
վրա յե վերցրել մեծ պարտավորութուններ—
պատվաստել աշխատավորական լայն մասսա-
ներին ստեխար-կուլտուրական գիտելիքներ և
սովորույթներ, պատրաստել միջին բուժպեր-

տնալի կազբեր։ Այդ խնդիրը դառնում է չա-
փազանց ակտուալ այն տեսակետից, վոր կա-
ռավարության կողմից սահմանված է սանի-
տական միջիմում, վորի կիրառումը դժվար-
բուէյան կհանդիպի նախ և առաջ ազգաբնակ-
չութիւնն սանիտարական անգրադիտության
պատճառով և կազանջի նշանավոր չափով
վորակավորված բժշկական ուժեր։

Այդ բնագավառում մենք անկասկած ու-
նենք նվաճումներ. խմբակների և գրութիւնանե-
րի աճում, սանիտար-կուլտուրական հիմնաք-
կությունների ցանցի ծավալում, — այդ բոլոր-
ը հանդիսանում են ցուցանիշներ մի կողմից
մեր նվաճումների, և մյուս կողմից ազգաբնա-
կության աճող պահանջների։ Սակայն վորակի
տեսակետից կա վստոջ հետամնացութուն։
Մինչեւ այժմ մեր կոմիտեները չեն նվիրում
պետք յեղած ուշադրությունը վորակական և
սոցիալական ընտրությանը խմբակների,
դրութիւնների, քույրերի դասընթացների ու
դպրոցների մեջ. դպրոցական դիսցիպլինան
նրանց մեջ դեռ բավականաչափ բարձր չէ.
դասատուների կազմը նույնպես ընտրում է
վորոջ չափով պատահական կերպով։

Սակայն խմբակների և դրութիւնների մի-
ջոցով մեր ընկերութունը կարող էր արմա-
տացնել աշխատավորների լայն մասսաների
մեջ սանիտարական գրագիտության տարբե-
րը։ Մեր մասսայական սանկուլտուրական ձեռ-
նարկումները նրանց վոչ բարձր վարակի ընտր-

Հիվ յերբեմն չեն տալիս պետք յեղած աշ-
դյունքը: Մեր մասսայական սանիտարակա-
աշխատանքները մենք դեռ բավարար չափի
չենք փոխանցել յերկրի ինդուստրացման և
գյուղատնտեսութեան կոլեկտիվացման ու-
սերի վրա: Յեվ սրա հետեւանքն է այն, լոր
մեր անդամադրութեան մեջ բանվորական
չերտը մեծ չէ:

Իսկ այստեղ կա գործունեութեան ամենա-
լայն ասպարեզ: Յեթե մեր կազմակերպու-
թյունները ավելի հաճախ և վոչ այնքան հան-
դիսավոր յեղանակով մտնեյին սոցմրցման
մեջ, ավելի ներգրավեյին հասարակայնու-
թյունը ամեն տեսակի գործնական աշխատանք-
ների մեջ, նրանք անպայման կարող կլինեյին
ավելի մեծ արդյունքներ ձեռք բերել կուլտու-
րական հեղափոխութեան ճակատում:

Իսկ պայքարը սանիտարական միջինումի
համար, վորը տանում են առողջապահութեան
մարմինները: Մի՞թե դա չի հանդիսանում աշ-
խատանքի մի արդյունավետ բնադատյալ, վոր-
տեղ կարմիր Սաչը կարող եր դառնալ հասա-
րակայնութեան կազմակերպիչ սանիտարական
անբարեկարգութեան դեմ պայքարելու գոր-
ծում:

Իսկ ամբողջ մեր կենցաղի վերակառուցու-
մը: Չե՞ վոր նա դեռ այսօր ել չի իր գեյ իր ար-
մատները մինչհեղափոխական շրջանի հետ և
կառուցվում է անդրժրհեղեղյան սկզբունքնե-
րով: Մի՞թե կարմիր Սաչի կազմակերպու-

թյունները չեյին կարող դառնալ մեր կենցաղի
կոլեկտիվացման պրոպագանդիստներ, կիրա-
ռելով իհարկե այդ դեպքում անհրաժեշտ
գործնական միջոցները և բանալով հարկավոր
հիմնարկները:


Յեղրակացությունը բղխում է ինքն իրեն:

Մենք չենք կարող հանգստանալ այն նվա-
ճումներով, վոր ունենք այժմ: Անհրաժեշտ է ել
սովելի մեծ չափով վտարի հանել մեր հասա-
րակայնությունը պայքարելու համար սանի-
տարական կուլտուրայի համար, սանիտարա-
կան անբարեկարգութեան վերացման համար:
Ընկերութեան յուրաքանչյուր անդամ պետք է
այս կամ այն չափով մասնակից լինի կուլտու-
րական շինարարութեանը:

Ավելի շա՛տ նախաձեռնություն, ավելի
մոտ մասսաներին, մաքսիմում զգայունու-
թյուն դեպի մասսաների պահանջները, մաս-
սաների հետ և մասսաների միջոցով վերակա-
ռուցենք մեր կյանքը նոր հիմունքների վրա:
Հարկավոր է մեր հիմնարկների ամբողջ ցան-
ցը, մեր բոլոր սանկուլտուրական ձեռնարկում-
ները մոտեցնել գործարանին, գավոռին, կոլ-
խոզին, սովխոզին. վտարի հանել անդամական
մասսան՝ պայքարելու համար անչարժութեան,
տգիտութեան, նախապաշարումների դեմ, և
նոր կենցաղի տարրեր արմատացնելու համար:

Մեր ընկերությունը պարտավոր է ավելի
լայն ծավալել բժշկական կարգերի պատրաս-
տումը, ընդ վորում մեզ անխորտակ պետք չէ

79-64619



սահմանափակել այդ աշխատանքը մինչև այժմ
ընդունված ձեվերով. վոչ միայն խմբակներ,
դրուժինաներ, ջուրերի դասընթացներ և զըս-
րոցներ. մենք պետք է ավելի ու ավելի լայ-
նացնենք դեֆիցիտային մասնադիտություն-
ների աշխատավորների պատրաստումը: Վատ
չէր լինի, յեթե ամենաուժեղ կազմակերպու-
թյունները ստանձնեյին նոր բժշկական բարձ-
րագույն դպրոցի կազմակերպումը:

Վերը արված ցուցումների հիման վրա կա-
րելի կլինեն այսպես ձեվակերպել մտակա
կոնկրետ խնդիրները.

1. Ավելի լայն և ավելի խոր կերպով դնել
բուժաշխատավորների կադրերի պատրաստու-
մը, բարելավելով այդ աշխատանքի մեթոդնե-
րը, և հետապնդել ավելի բարձր վորակի ար-
տադրություն:

2. Ավելի լայն ծավալել սան-կուլտուրա-
կան ձեռնարկումների ցանցը, ձգտելով դրանց
սպասարկմամբ ընդգրկել վոչ թե հարյուրա-
վորներ և հազարավորներ, ինչպես այդ կա-
տարվում է այժմ, այլ տասնյակ և հարյուր
հազարավորներ (մսուրներ, կոնսուլտացիա-
ներ, սան-լուսաշխատանքներ և այլն):

3. Պետք յեզած ուշադրությունը ցույց
տալ պատրաստվող կադրերի սոցիալական
ընտրողությանը:

4. Մշակել կոնկրետ ձեվեր մեր մասնակ-
ցության համար սանիտարական միջոցումը ի-
րադրոթելու մեջ և անմիջապես սկսել դրանց
գործադրումը:

5. Անհրաժեշտ է ավելի լայն մասնակցու-
թյուն ցույց տալ առողջացման այն եքսկուր-
սիաներին, վոր կազմակերպում են «Յորհրդա-
յին Տուրիստը», ՊԱՋԷ-Ավիտըիմը, կոմսոմո-
լը և այլն:

6. Կենտրոնացնել ուշադրությունը առող-
ջացման աշխատանքներին պատանի պիոներնե-
րի մեջ (սանատորական ճամբարներ, առող-
ջացման հրապարակներ և այլն):

Անկարելի յե թվել աշխատանքի բոլոր
կոնկրետ ձեվերը, բայց բերված որինակները
բավական պարզ կերպով վորոշում են աշխա-
տանքի ուղղությունը:

Տանել սանիտարական կուլտուրան աշխա-
տավորների ամենալայն մասսաների մեջ իրենց
մասսաների հետ և մասսաների միջոցով:

Ավելի լայն ծավալել կադրերի պատրաս-
տումը:

Ավելի մեծ չափով ընդգրկել առողջացման
աշխատանքների մեջ աշխատավոր ազդարնա-
կությունը սանիտարական և բուժական հիմ-
նարկների միջոցով:

Իսկ վոր գլխավորն է, դարձնել յերեսներս
դեպի արտադրությունը:

Վոչ թե ընդհանրապես տանել սանիտարա-
կան աշխատանք, այլ կոնկրետ կերպով՝ գոր-
ծարանում, դավիդում, կոլխոզում, սովխո-
զում: Իր ազդեցությամբ նպաստել անհատ
գյուղացուն ընդունելու կոլեկտիվացման սկզբ-
բունքները:

Որհնդալին պետութեան թշնամիները կատաղիորեն զինվում են: Սոցիալիստական շինարարութեան մեր հաջողութեանները նրանց հանդիստ չեն սալիս: Այդ պատճառով մենք յերբեք ապահովված չենք նոր հարձակումներից, նոր պատերազմներից: Ահա թե ինչպես է բնորոշում պատերազմական պատրաստութեանները ընկ. Վորոշիլովը XVI համադումարում ունեցած իր յերույթի մեջ. «Իմպերիալիստները պատրաստվում են պատերազմի ինչպես հարկն է—այնպիսի մեթոդներով, վորոնք բոլորովին տարբերվում են նրանցից, վորոնք վաղուց չե ինչ գործ էյին զբվում և անհամեմատ ավելի լայն մասշտաբով», և հետո նա բերում է որինակներ, թե ինչպես են աճում կապիտալիստական բանակները, նրանց զինումը և ռազմական բյուջեները: «Ընդ վորում, ավելացնում է նա,—անմտութեան կլիներ, յեթե մենք կարծեյինք, վոր զինման համար ծախքերը սահմանափակվում են միայն ռազմական բյուջեների հոլվածներով»: Ահա թե ինչու մենք պետք է տասնապատկենք մեր ռազարութեանը դեպի այդ հարցերը և տասնապատկենք մեր մասնակցութեանը յերկրի սանիտարական պաշտպանութեան ամբողջական գործում: Այդ աշխատանքի ձեվերը և մեթոդները բավականաչափ յուրացված են մեր կարգավերապետութեաններին կողմից: Պետք է բոլոր

միջոցները ձեռք առնել ներգրավելու համար, այդ աշխատանքի մեջ մեր ընկերութեան բոլոր անդամներին: Անհրաժեշտ է մացնել այդ աշխատանքի մեջ պարզութեան և դիսցիպլինա: Անհրաժեշտ է ստեղծել այնպիսի դրութեան, վորպեսզի յուրաքանչյուր մեր կազմակերպութեանը հավատացած լինի, վոր նա պատրաստ է ամեն մի բոլի, վոր նա աշխատունակ է յերկրի սանիտարական պաշտպանութեան ամբողջական գործում:

Իսկ դրա համար անհրաժեշտ է. 1) սայահովել բանվորագլուղացիական կազմը խմբակների, դրութեանների, քույրերի դասընթացների և դպրոցների և այլն մեջ, 2) համակել այդ ամբողջ աշխատանքը ամենախիստ պատասխանատվութեամբ և յենթարկել խիստ դիսցիպլինայի, 3) ամբողջ 100 տոկոսով կիրառել բոլոր պլանային ցուցմունքները աշխատանքի այդ ճյուղի վերարբամբ, անչեղ կերպով բարձրացնելով նրա վորակը, 4) խաղաղ աշխատանքը այնպես դնել, վորպեսզի պատերազմի ժամանակ նրան կարելի լինի վորխանցել պատերազմական կարիքներին բավարարելու համար:

Պետք է նչել, վոր մեր կազմակերպութեաններից շատերը այդ ամենալուրջ խնդրին մոտենում են կամ վոչ բովականաչափ ռազարութեամբ կամ ռեղակի ձեվականորեն, դատելով որինակի համար այսպես. «Կարմիր Պաշտպանությունը սահմանել է մեզ համար այս ինչ թիվ խմբակների, դրութեանների և այլն: Յես

այդ կատարել եմ»։ Այդպիսի մոտեցում թիանդամայն անթույլատրելի յե։ Հենց այդ աշխատանքին և, վոր ամենից քիչ կարելի յե մոտենալ Փորձալ կերպով։ Ընդհակառակը, բոլոր միջոցները պետք և դործ դնել, վորպեսզի ծավալել այն՝ մաքսիմալ չափով, հասարակելով ավելի նախաձեռնություն։ Այդ են պահանջում. 1) պատերազմի որ ավուր աճող վտանգները. 2) տրամադրությունը իրենց՝ բանվորական մասսաների, վորոնք ցուցաբերել են մե՛ծ վողեվորություն յերկրի պաշտպանության ամրացման գործում։

Դա վերջապես նպաստում և նաև մեր խաղաղ աշխատանքի ընդլայնմանը, վորովհետև այդ բնագավառում յեղած բոլոր ձեռնարկումները կարող են հաջողությամբ ուղտագործվել և խաղաղ ժամանակի համար (խմբակները, դրուժինաները և այլն)։

Առանձին ուշադրություն պետք և դարձնել հավաքելու այնպիսի գույք և առարկաներ, վորոնք պահանջվում են կազմակերպելու համար բժշկական ոգնություն վերապոր և հիվանդ կարմիր բանակայիններին և թուճավոր նյութերից տուժածներին։ Պետք և սկսել սանիտարական ինքնաթիռների կառուցման միջոցների մոբիլիզացիան։ Փորձը ցույց և տալիս, վոր դրանք շատ ոգտակար են խաղաղ ժամանակը։ Ավելի ևս մեծ և նրանց նշանակությունը պատերազմական ժամանակի պարմաններում։

XVI-րդ Համագումարը նշեց, վոր մեր պրոֆմիտիստները դեռ բավականաչափ չեն դարձրել յերեսները դեպի արտադրություն։ Մոշոր չափով այդ նշումը վերաբերում և նաև մեր կազմակերպություններին։

Բանակապես մենք անհասկած աճում ենք, լավանում և նաև մեր աշխատանքի վորակը։ Մակայն ասել այսոր, վոր մենք արել ենք ամեն ինչ, վորպեսզի վերակառուցենք մեր աշխատանքը կուսակցության դիլավոր պծի մաքսիմալ արտացոլման ուղղությամբ, մենք չենք կարող։ Համագումարի դիրեկտիվներից մեկն ևր—ամբողջ ուշադրությունը կոլխոզներին։ Տարաբախտաբար, այդ դիրեկտիվը չի կատարվում բավականաչափ վճռականությամբ։ Մեր կոմիտեները առաջվա պես (իհարկե վոչ բոլորը) կպչում են քաղաքներին, մոռանալով, վոր այդտեղ մեր ոգնությունը ավելի քիչ և հարկավոր, քան գյուղում։ Իր աշխատանքների վերակառուցումը գյուղին և առաջին հերթին կոլխոզներին սպասարկելու ուղղությամբ—հանդիսանում և մարտական խնդիր, վորը կանգնած և մեր ընկերության առջև։ Իսկ քաղաքում պետք և ավելի սերտ կերպով մտտենալ գործարանին և գավոդին։

Առաջինը, դրանով իսկ մենք կոզնենք հիմնական խնդիրների իրականացմանը, և յերկրորդը, ավելի հեշտությամբ կվերակառուցենք մեր անդամության սոցիալական կազ-

Վերջ: Հետեւաբար XVI համագումարի վորոշումները պարտավորեցնում են մեզ այնպես կառուցել մեր աշխատանքը, վորպեսդէ նա տարվի վոչ թե ընդհանրապես հանուն կուլտուրայի բարձր գաղափարների, այլ ունենա կոնկրետ, նպատակային ձգտում՝ ողնելու յերկրի ինդուստրացմանը, գյուղատնտեսութեան կոլեկտիվացմանը: Ուրիշ խոսքերով մենք պետք է կառուցենք մեր աշխատանքը յերեսներս գեպի արտադրութեանը:

Ավելի՛ շատ կազմակերպվածութեան, կարգապահութեան և պատասխանատվութեան:

Մրա հետ կապված բազմաթիւ խնդիրներու կանգ առնենք մի քանիսի վրա:

I. Աշխատանքների կազմակերպութեան: Մեր բոլոր պլենումները և համագումարները շարունակ շեշտում են, վոր մենք տանում ենք մեր աշխատանքները անարխիկ յեզանակով, այդ պատճառով մեզ մոտ թույլ է հասարակայնութեանը, թույլ է անում ահտիվը: Այդ հիվանդագին հարցերը ավելի ահտուալ են դառնում, յերբ մենք անցնում ենք նոր վարչական տերրիտորիալ բաժանմանը: Գովառններէ վերացումը պահանջում է ուժեղացնել ղեկավարութեանը կարմիր Սաչի կենտրոնական կոմիտեյի կողմից: Միևնույն ժամանակ պետք է ուժեղացվի ղեկավարութեանը շրջաններում:

Ահա թե ինչու մենք պետք է կատեգորիկ կերպով պահանջ դնենք. 1) հասցնել մինիմու-

մի թղթային ղեկավարութեանը, փոխարինելով այն կենդանի հրահանգչութեամբ, 2) ուղարկել շրջանները վոչ պակաս քան 90 տոկոս գովառի աշխատակիցներին, 3) աշխատանքները այնպես կազմակերպել, վոր նրանք չպահանջեն մեծ ծախքեր ապարատի վրա և տարվեն հասարակայնութեան կարգով, ոգտագործելով դրա համար ահտիվին:

II. Պատասխանատվութեան. Մեզ մոտ այժմ պատահում են այնպիսի կոմիտեներ, վորտեղ վոչ վոք վոչ մի բանի համար պատասխանատու չէ: Նախագահը և կոմիտեյի պատվավոր անդամը—ներկայացուցչական դիրքով—ահտիվ գոյութեան չունի: Յեւ բոլորի փոխարենն աշխատում է քարտուղարը: Իսկ յեթե նա մի տեղ է գնացել, «կոմիտե» փակվում է, և ամբողջ աշխատանքը գաղարում է: Բարեբախտաբար, այդպիսի կոմիտեները այժմ հազվադէպ են, ապարատները ընդհանրապես ավելի և ավելի ամրանում են: Պետք է վերջ դնել այդպիսի անպատասխանատվութեանը: Կոմիտեյի և նրա նախագահութեան մեջ չպետք է մնան պատվավոր անդամներ. յուրաքանչյուրին պետք է հանձնարարվի միանգամայն կոնկրետ գործ, վորի համար նա կրում է ամբողջ պատասխանատվութեանը:

Պետք է ավելի մեծ ուշադրութեան դարձնել ահտիվ պատրատելու գործին:

Պետք է ուժեղ կերպով բանվորացնել մեր ղեկավարող մարմինները:

Մի խոսքով, անհրաժեշտ է արձատարել
անել մեր շարքերից այն բյուրոկրատիզմը,
անպատասխանատվութիւնը և աշխատանքի
վոչ հասարակական մեթոդները, վորոնք դեռ
բավականաչափ դոյութիւն ունեն, և կարմիր
կազմակերպութիւնները դարձնել գործու-
նյա: Իսկապես պրոլետարական հասարակա-
կան կազմակերպութիւններ:

Աշխատանքը այդ ուղղութիւնը վերակա-
ռուցվում է: Կուսակցութեան և կարմիր կազմակերպութեան
պլենումի դիրեկտիվները գործադրութեան են
անցնում: Բայց տեմպերը բավարար չեն, XVI
համագումարը պահանջում է անհապաղ վերա-
կառուցում, վորպէսզի մենք ամենակարճ ժա-
մանակում սկսենք աշխատել նոր յեղանակով:

III. Կարգապահութիւն: Տարաբախտա-
բար, այդ հատկութեամբ մեր կազմակերպու-
թիւնները աչքի չեն ընկնում: Շարունակ ստու-
րադաս կոմիտեները չեն կատարում կամ փոտ
են կատարում վերադաս մարմնի դիրեկտիվ-
ները և պահանջները: Մանավանդ սուր կեր-
պով աչքի չեն ընկնում դիտչիպլինայի բացակա-
յութիւնը Ֆինանսական բնագավառում:

Սահմանվում են տվյալ կազմակերպութեան
համար բյուջեյի կոնտրոլ թվեր և առաջարկե-
վում է նրանց հիման վրա կազմել անդեֆիցիտ-
տային բյուջե: Բազմաթիւ կոմիտեներ ներ-
կայացնում են իրենց բյուջեն՝ կոնտրոլ թվերի
սահմաններից չսխադանց դուրս չեկած: Բացի
գրանից, հաճախ չեն կարողանում հիմնովո-

րել իրենց ծախքերը: Լինում են և ուրիշ կար-
գի դեպքեր: Այս ինչ կոմիտեյին հատկացվում
է այսինչ քանակութեամբ միջոցներ, որինակի
համար մասսայական ռազմա-սանիտարական
աշխատանքներ տանելու համար: Ստուգման
ժամանակ պարզվում է, վոր այդ միջոցների
մեծագույն մասը ծախսված է սանիտարական
համարուի կառուցման և սարքավորման հա-
մար:

Կարմիր կազմակերպության կոմիտեյին
հարկավոր է տարվա ընթացքում վորոչ
ժամկետներում շրջաններից տեղեկութիւններ
ունենալ բյուջեյի յեկամտային մասի կատար-
ման ընթացքի մասին, վորպէսզի հնարավոր
դեֆիցիտի դեպքում ժամանակին անհրաժեշտ
միջոցներ ձեռք առնել, իսկ գերակատարման
դեպքում ավելացած մուտքերին նպատակային
հատկացում տալ: Միայն փոքրաթիւ կոմիտե-
ներ ժամանակին ներկայացնում են իրենց հա-
շիվները: Իսկ մեծամասնութիւնը ներկայաց-
նում է մեծ ուշացումով, յերբ նրանց կարիքը
արդեն անցել է և այլն: Անհրաժեշտ է մտցնել
խիստ դիտչիպլինա:

Մի քանիսը մեր կազմակերպութիւններից
սկսած է լալ թափ տան իրենց և ավելի կազմա-
կերպված գրութիւն ընդունեն:

IV. Կատարման ստուգում: Մեր կազմա-
կերպութեան աշխատանքների վերը նշած թե-
րութիւնները ցույց են տալիս, վոր կատար-
ման ստուգման գործը մեզ մոտ հեռու չէ բա-

վարար լինելուց: Չե վոր այդ բոլոր խնդիր-
ների վերաբերմամբ կան կարմիր Սաչի Կենտ-
րոնական Կոմիտեյի նպատակահարմար վորո-
շումներ: Այնուամենայնիվ այդ վորոշումները
չատ վատ են կատարվում: Մենք պետք է մեր
աշխատանքների մեջ կիրառենք կատարման
ստուգատեսի խիստ սիստեմ, յեթե մենք չենք
ուզում լինել «ալլելույականներին» դերում,
ինչպես ընկ. Ստալինը կնքել է այն մարդկանց,
վորոնք ասում են լավ խոսքեր, իսկ անում
են «աջ» գործեր:

V. Աշխատանքի նոր մեթոդների մասին:
Մեր կազմակերպությունները թույլ կերպով
են յուրացնում աշխատանքի նոր մեթոդները.
չեն յենթարկում քննադատության իրենց աշ-
խատանքները, չեն մերկացնում բացերը: Սոց-
մրցումը դեռ շարունակում է պարադալին բը-
նույթ կրել. հանդիսավոր ձեվով կնքում են
պայմանագրեր, և դրանով գործը վերջանում
է: Իսկ յերբ սկսում են ստուգել պայմանա-
գրի կատարումը, պարզվում է, վոր նա չի
կատարված կամ կատարված է անբավարար
չափով: XVI համագումարը պահանջում է վրձ
ուսկանապես անցնել աշխատանքի հեղափո-
խական մեթոդներին: Այդ մեթոդները, կա-
նոնավոր կերպով կիրառվելով շինարարու թյան
մի շարք ճյուղերում, արդեն հսկայական ար-
դյունք են տվել: Մեր դանդաղաշարժու թյու-
նը և անճկունությունը պետք է բժշկել հար-

վածայնությամբ, վորը դեռ չի գտել լայն
գործադրություն մեր պրակտիկայում:

«Այժմ այլևս կասկած չի կարող լինել, —
ասում է ընկ. Կազանովիչը կենտկոմի կազմա-
կերպչական հաշվետվության մեջ, վոր մեր
շինարարության ամենակարեվոր փաստերից
մեկը յեթե վոչ կարևորագույնը հանդիսանում
է ներկա մոմենտում գործարանների, զավոդ-
ների սոցիալիստական մրցումը, հարյուր հա-
զարավոր բանվորների հայտարարություննե-
րը մրցման ասպարիզում. ձեռք բերած ար-
դյունքների մասին հարվածայնության լայն
ծավալումը»:

Այդ հարցը մենք պետք է դնենք կտրուկ է
վճռական կերպով. մենք պետք է մեր աշխա-
տանքները տանենք նոր մեթոդներով:

VI. Անդամական մասսայի մասին: Յու-
րաքանչյուրի համար պետք է բոլորովին պարզ
լինի, վոր մեր առջեվ կանգնած խնդիրների
իրագործումը հիմնականում կախված կլինի
նրանից, թե ո՞վ է կատարելու դրանք: Կարե-
լի՞ յե արդյոք սպասել սոցիալիստական խըն-
դիրների բարեխիղճ կատարում այնպիսի
մարդկանցից, վորոնք իրենց ներքին բովան-
դակությամբ, իդեոլոգիայով հանդիսանում
է ոտար տարր, վորոնց համար այդ խնդիրնե-
րը հասկանալի չեն, վորովհետև նրանք չեն
կարող կամ չեն ուզում հասկանալ դրանց, կամ
վորոնք թշնամաբար են վերաբերվում դեպի
այն ամենը, ինչ վոր սոցիալիստական է, վոր-

բովհետև նրանք ամուր կերպով յուրացրել են կապիտալիստական դրույթը և դավանում են այդ: Իհարկե վոչ: Մինչդեռ Կարմիր Սաչի անդամների շարքերում յերբեմն պատահում են ոտար տարրեր, վորոնք կարող են ձգտել նունիսի մտնել դեկափար մարմինների կազմի մեջ: Կարմիր Սաչի Կենտկոմը դիրեկտիվ է տվել կատարելու Կարմիր Սաչի անդամներն ցտուգում և հեռացնել այն բոլոր տարրերը, վորոնք սոցիալապես ոտար են պրոլետարական հասարակայնությանը:

Իսյց դա բավական չէ, մեր բոլոր կազմակերպությունները առաջիկայումն էլ պետք է արթուն կերպով վերաբերվեն անդամության սոցիալական կազմի խնդիրներին, անշեղորեն ձգտելով ուժեղացնել նրա մեջ բանվորական և չքավոր-միջակային շերտը, ամեն միջոց ձեռք առնելով մտքսիմալ չափով ներգրավելու ընկերության անդամությանը կոլխոզականներին: Իսկ ամեն տեսակի ոտար տարրերի թափանցումը ընկերության անդամության մեջ ընդհանրապես չպետք է տեղի ունենա: :

Այդ հարցում խնդիրն էր ձեվակերպված են ընկ. Ստալինի կողմից Համ ԿԿ (բ) Կենտկոմի ապրիլյան պլենումում արտասանած իր ճառում: Խոսելով ժողովրդական տնտեսության վերակառուցման մասին և այն վերակազմության մասին, վորին անհրաժեշտ է յենթարկել բոլոր մարմինների ու կազմակերպություններին շարքերը և աշխատանքի մեթոդները ընկ.

Ստալինն սասց. «Այդ վերակառուցումը անցկացնելու համար, պետք է նախ և առաջ բարելավել և ամրացնել սոցիալիստական շինարարության կազմերը ինչպես տնտեսական, խորհրդային և պրոֆմիութենական, այնպես էլ կուսակցական և կոոպերատիվ, պետք է թափ տալ մեր կազմակերպությունները, մաքրել նրանց աղբից, պետք է բարձրացնել բանվոր դասակարգի ու զյուգադիության միլիոնավոր մասսաների ախտիվությունը»:

Այդ խնդիրները ամբողջ ծավալով վերաբերում են նաև մեր կազմակերպություններին, վորոնց համար նույնպես անհրաժեշտ է մաքրվել աղբից և կառուցել իր աշխատանքները խորհրդային հասարակայնության նոր մեթոդներով:

VII. XVI համագումարի վորոշումների կատարումն համար: XVI համագումարի վորոշումները տալիս են սոցիալիստական շինարարության ընդարձակ ծրագիր, վորը յուրաքանչյուր կազմակերպություն պարտավոր է ընդունել իրեն հիմք իր գործունեյության համար: Կարմիր Սաչի բոլոր կազմակերպությունները պետք է ուսումնասիրեն այդ վորոշումները, նրանց դարձնեն իրենց սեղանի գիրք, վորտեղից պիտի քաղեն սոցիալիստակ. շինարարության հարուստ փորձ և ցուցմունքներ իրենց ապագա աշխատանքների համար:

Անհրաժեշտ է ձեռք բերել այնպիսի դրույթյուն, վորպեսզի Կարմիր Սաչի յուրաքան-

չյուր ակտիվիստ վոչ միայն գիտենա այդ վո-
րոշումները, այլ և լինի նրանց ակտիվ տարա-
ծողը: Անհրաժեշտ է, վորպեսզի Կարմիր Սա-
չի յուրաքանչյուր անդամ գիտենա և հասկանա
XVI համագումարի հիմնական վորոշումները:
Իսկ ամբողջ ընկերությանը պետք է պահանջ
գնել—վոչ միայն գիտենալ և հասկանալ XVI
համագումարի վորոշումները, այլ և հմտու-
թյամբ իրագործել դրանց Կարմիր Սաչի գործ-
նական աշխատանքների մեջ: Այդ կերպով և
միայն այդ կերպով մենք կարող կլինենք դառ-
նալ սոցիալիստական շինարարության իսկա-
կան մասնակիցներ: Այդ կերպով ամենևով մեր
աշխատանքները, մենք կկարողանանք նվաճել
սուաջին տեղերից մեկը նոր սոցիալիստական
հասարակության կառուցողների շարքերում:

XXXXXXXXXXXXXXXXXXXX

<< Ազգային գրադարան

NL0219184

7160 10 400

34.413

С. П. П. И. О. Т. К.
И. И. С. И. Т. У. Т. А.
В. П. П. О. В. Е. Р. Е. Н. И. Я.
А. Р. А. В. Е. Л. 6. 6. 6. 7.
С. С. Р.